

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև սահմանային հարցերով համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուկրաինայի կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

դեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով և սկզբունքներով, բարեկամական հարաբերություններ զարգացնելու և Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի պետական սահմաններում անվտանգության փոխադարձաբար ապահովմանն աջակցելու ցանկությամբ,

հաստատելով իրենց հավատարմությունը ՄԱԿ-ի կանոնադրության, Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև բարեկամության և համագործակցության մասին 1996 թվականի մայիսի 14-ի Պայմանագրի դրույթներին, ինչպես նաև ԵԱՀԿ սկզբունքներին,

հաշվի առնելով պետական սահմաններում անօրինական միգրացիայի, զենքի, թմրամիջոցների և սահմանով տեղափոխելու համար արգելված այլ ապրանքների ու առարկաների մաքսանենգության ակտիվությունը,

արտահայտելով շահագրգռվածություն սահմանային հարցերով արդյունավետ համագործակցության գործում,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը կիրականացնեն և կզարգացնեն միմյանց միջև իրավահավասար, գործընկերային հարաբերություններ՝ ուղղված իրենց պետական սահմանների պահպանության ամրապնդման խնդիրների արդյունավետ լուծմանը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի կատարմանն ուղղված միջոցառումների կոնկրետ իրագործման համար Պայմանավորվող կողմերը հանձնարարում են Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերի հրամանատարին և Ուկրաինայի սահմանապահ զորքերի հրամանատարին, փոխադարձ համաձայնությամբ, մշակել

սահմանապահ գերատեսչությունների փոխգործակցության և համագործակցության ընդլայնմանը նպաստող համապատասխան արձանագրություններ:

Պայմանավորվող կողմերը սահմանային հարցերով համագործակցությունը կիրականացնեն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարության և Ուկրաինայի պետական սահմանի պահպանության գործերով պետական կոմիտեի միջոցով:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը կաջակցեն իրենց պետական սահմանով ահաբեկչական խմբերի, անօրինական միգրանտների և այլ հանցավոր տարրերի թափանցման, զենքի և ռազմամթերքի, պայթուցիկ, հրդեհող, թունավորող, ռադիոակտիվ, հոգեներգործող նյութերի, թմրամիջոցների և ներմուծման /արտահանման/ համար արգելված այլ ապրանքների ու բեռների ապօրինի փոխադրումների փորձերի կանխմանը:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերը առանձին համաձայնագրով կսահմանեն մի Պայմանավորվող կողմի տարածքից մյուս Պայմանավորվող կողմի տարածք անօրինական մուտք գործած անձանց ընդունման և փոխանցման կարգը:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը կապահովեն պետական սահմաններում ստեղծվող իրադրության, սահմանային հարցերով նոր օրենսդրական ակտերի մասին փոխադարձ հետաքրքրության ներկայացնող տեղեկությունների ժամանակին փոխանակում:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են չփոխանցել 3-րդ կողմի միմյանցից ստացած ծառայողական գաղտնի բնույթի նյութերն ու տեղեկությունները առանց այն Պայմանավորվող կողմի գրավոր համաձայնության, որից այդ նյութերը և տեղեկությունները ստացվել են:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը համագործակցություն են իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության անցկացման հարցերով՝ ի շահ պետական սահմանների պահպանության ապահովման, իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, դրա համար լիազորված սահմանապահ զորքերի մարմինների միջոցով:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերն, անհրաժեշտության դեպքում, կաջակցեն մինյանց սահմանապահ զորքերի սպայական կադրերի և կրտսեր մասնագետների պատրաստման հարցերում՝ ելնելով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի հնարավորություններից:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերը մինյանց օգնություն կցուցաբերեն նյութատեխնիկական ապահովման, պատվերների տեղաբաշխման, սահմանի պահպանության տեխնիկական միջոցների և սպառազինության մշակման, պատրաստման, ներդրման, վերանորոգման գործում:

Հոդված 10

Սույն Համաձայնագրով նախատեսված գործողությունների համար փոխհաշվարկների կարգը սահմանվում է առանձին արձանագրություններով՝ ըստ գործունեության ուղղությունների՝ Պայմանավորվող կողմերի գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

Սույն Համաձայնագրով նախատեսված փոխադարձ պարտավորությունների կատարումն ապահովելու, ինչպես նաև համագործակցության և փոխգործակցության ընթացքում ծագող հարցերը լուծելու համար Պայմանավորվող կողմերը, անհրաժեշտության դեպքում, կանցկացնեն խորհրդակցություններ կամ կստեղծեն համատեղ աշխատանքային խմբեր:

Հոդված 12

Անհրաժեշտության դեպքում, Պայմանավորվող կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը ամբողջությամբ կամ մասամբ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի առանձին դրույթների գործողությունը: Նման որոշում ընդունելու կամ այն վերացնելու, դրա գործողության ժամկետների մասին մյուս Պայմանավորվող կողմը կտեղեկացվի դիվանագիտական ուղիներով ոչ ուշ, քան համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման կապակցությամբ տարաձայնությունները Պայմանավորվող կողմերը կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար Պայմանավորվող կողմերի կողմից անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցման օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Դրա գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չհայտնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին, ինչի մասին նա պետք է գրավոր ծանուցի մյուս Պայմանավորվող կողմին ոչ ուշ, քան սույն Համաձայնագրի գործողության հերթական ժամկետի վերջանալու օրվանից վեց ամիս առաջ:

Կատարված է Կին քաղաքում 1997 թվականի հուլիսի 22-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման հարցում տարաձայնություններ ծագելու դեպքում որպես հիմք ընդունվում է ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հոկտեմբերի 31-ից: